ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

№ ԳՀԱՊՁԲ-22-7/39-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 19 .12.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ՌԻՄՆԱ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Համբարձումյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 02.11.2022թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-22-7/39-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 22310000 / **քսաներկու միլիոն երեք հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ**: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ քան 26.12.2022թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանումը ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը :

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՌԻՄՆԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ ք.Երևան, Բաբայան 36, 72/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Ակբաբանկ ԲԲԸ
Հ/Հ 900011144079	ՀՀ 220300126772000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01022893
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը
1.	Ուսադիր գնդապետի	զույգ	1600	1800	2880000	2022թ 4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան 20.12.2022թ
2.	Ուսադիր փոխգնդապետի	զույգ	4000	1750	7000000	
3.	Ուսադիր մայորի	զույգ	3200	1700	5440000	
4.	Ուսադիր կապիտանի	զույգ	1400	1750	2450000	
5.	Ուսադիր ավագ լեյտենանտի	զույգ	600	1650	990000	
6	Ուսադիր լեյտենանտի	զույգ	600	1600	960000	
7	Ուսադիր ավագ ենթասպայի	զույգ	600	1650	990000	
8.	Ուսադիր ենթասպայի	զույգ	1000	1600	1600000	

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 26.12.2022թ., ընդ որում
			4-րդ եռամսյակ
1.	Ուսադիր գնդապետի	35811190/542	2880000
2.	Ուսադիր փոխգնդապետի	35811190/543	7000000
3.	Ուսադիր մայորի	35811190/544	5440000
4.	Ուսադիր կապիտանի	35811190/545	2450000
5.	Ուսադիր ավագ լեյտենանտի	35811190/546	990000
6.	Ուսադիր լեյտենանտի	35811190/547	960000
7.	Ուսադիր ավագ ենթասպայի	35811190/548	990000
8.	Ուսադիր ենթասպայի	35811190/549	1600000

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

_____ Կ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

ՌԻՄՆԱ ՍՊԸ տնօրեն

_____ Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ